

1889

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Ա.Ռ.

ՎԵՐԵԱՆՈՂՍ ԲԱԶՄԱՎՈՐՆ



ԱՆԴՈՒՆԴՈՂ յաւիտենականութեան կը թաղուին ամբ, կ'անցնին ժամանակը. եւ որքան արդեօք ցաւալի եւ անդարմանելի պիտի լինէր կորուստն, եթէ ժամանակին 'ի վայր գլորելու միջոց, մարդկութիւնն չենէր 'ի վեր. այսինքն է. չգարգանայր եւ չյառաջադիմէր մտօք եւ հանճարով: Սակայն այս զարգացման եւ յառաջադիմութեանն առաջին քայլն՝ պէտք է լինի յուսմունս եւ 'ի գիտութեան, առանց որոց չեն կարող զարգանալ եւ յառաջել նոյն իսկ արուեստք եւ ճարտարութիւնք: Սկսնայն ինչ եւ ամենայն ոք արդ. 'ի զարգացման կայ, եւ թուի՝ թէ դարուս հոգին եւ յատուկ ընադրոշմն է Յառա-

ջադիմութիւն. ուստի իրաւամբ կրնամք համարիլ մեր այս դարս իւր կատարեալ հասակին եւ վիճակին մէջ՝ գիտութեանց զարգացմամբ, մասաւանդ փորձառական եւ գործնական ուսմանց եւ արուեստից նկատմամբ. որոց գեղեցիկ ազդեցութիւնը՝ հարկ է խոստովանիլ՝ թէ յիրաւի կրեր է եւ կը կրէ մեր ազգն եւս: Ո՛րքան եւ որպիսի՜ զանազանութիւն եւ խտիր՝ աստի դար մ'առաջ եղած աշխարհին եւ այժմեան աշխարհիս վիճակին մէջ. նորանոր եւ օգտակար գիւտք մատակարարեցին մարդկութեանս ամենայն կարեւոր միջոցները՝ 'ի պէտս կենաց եւ բարօրութեան: Զէ՛ հարկ յիշել աստանօր, (եւ ո՛ր 'իտք եւ յիշողութիւն կարող է արդեօք մէջ բերել յանուանէ), այն ամէն ազգի ազգի գիւտերը, գործիները, մագնիսութեան եւ ելեքտրականութեան գործած հրաշալի արդիւնքները, զորս միշտ կը տեսնեմք մեր այօք իսկ: Իսկ եթէ յատկապէս դառնանք մեր ազգին, եւ մտօք երազ ակնարկ մը տանք, թէ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուէր արդեօք, չքսեմ դար մը՝ այլ կէս դար առաջ, գուցէ խոտորի կամ՝ շանայ մոքերնիս, եթէ կարելի ըլլայ այսպէս բացատրել, ինչպէս կը պատահի աչաց՝ երբ 'ի սաստիկ պայծառութենէ՛ յանկարծ՝ 'ի մուծ նայելու լինիմք: - Վասնզի այն ժամանակ չկայր դեռ ազգիս մէջ այնքան փոյթ եւ ուսումն եւրոպական լեզուաց, չկային ուսումնաւորներ. եւ տակաւին ազգային ժիր եւ մտացի պատանեաց առջեւ փա-



կեալ էին դրունք համալսարանաց եւ բարձրագոյն վարժարանաց. 'ի հարկէ անոր համեմատ եւս, գուրկ էր մեր ազգն յայն ամէն օգտաշաճ ծանօթութեանց, որք արդ հասարակ են ամենուն. — այն առեն դեռ բոլորովին գեղեցկին եւ վսեմին գաղափարք չ'էին փայլեր 'ի գրութիւնս եւ յարուեստս. — միով բանիւ, հնաւանդ քողք եւ վարագոյրք դեռ եւս պատեր էին եւ կ'արգելէին մեր ազգին առջեւ յառաջադիմութեան ասպարէզը՝ եթէ յարուեստս եւ եթէ յուսմունս: Այլ անոր 'ներհակ՝ ո՞րքան սփոփիչ է մեր ազգին այժմեան վիճակն, երբ կը տեսնեմք՝ որ անդադար տարուէ տարի կ'աճին ուսումնաւորներից թիւք, կը 'Տոխանայ մատենագրութիւն, նիս 'նորանոր հրատարակութեամբք. — երբ կը տեսնեմք՝ որ անդադար մրցման մէջ են գաւառ ընդ գաւառի, քաղաք ընդ քաղաքի, եւ վարժարան ընդ վարժարանի, կորգելու իրարմէ առաջնութեան պատիւը եւ յառաջադիմութեան բրաքինը. — երբ կը տեսնեմք՝ որ միշտ 'նորոգ իմն աշխուժիւ եւ սիրով ազգութեան վառեալ՝ ամենայն անհատ իւր միակ 'ճիգն եւ ջանքն կը գործածէ յօգուտ եւ 'ի պարծանս ազգին եւ հայրենեացն. — յիշաւ այս ամէնն շատ գովելի եւ սփոփիչ են: Սակայն պիտի 'ներեն մեզ անշուշտ ընթերցողք ընել զայս մի հակիրճ խորհրդածութիւն, — թէ շատ աւելի օգտաւէտ եւ ցանկալի կըլլար, եթէ ուսումնասէրք այս իրենց անխնջ ջանքն եւ եռանդն 'ի գործ դնէին մանաւանդ 'ի լուրջ եւ հաստատուն ուսմունս եւ գիտութիւնս, որպիսիք են: Ազգային մատենագրութիւն, Ազգային պատմութիւն եւ աշխարհագրութիւն, Դաստիարակութիւն (մանաւանդ՝ Մանկավարժութիւն յընտանիս եւ 'ի վարժարանս), Խմաստասիրութիւն եւ Արուեստագիտութիւն (այսինքն է, թէ ի՞նչպէս պէտք են զարգանալ յազգիս արուեստը եւ 'ճարտարութիւնը), եւ այլ սոցին 'նման գիտութիւնք՝ որք գործնական կենաց, այլ եւս առաւել՝ բարոյական եւ մտաւորական կենաց նպաստամատոյցք պիտի լինին: Այս ահա միակ նպատակ պիտի լինի ազգային օրագրաց եւ ուսումնաւորներից, որք այլ եւ այլ ձեւովք եւ դրիւք, այլ եւ այլ գեղեցիկ անուամբք հրատարակուեր են եւ կը հրատարակուին. որք իրենց շրջանին մէջ՝ աւելի կամ 'նուազ մատուցանելով ազգիս օգուտ եւ ծառայութիւն՝ ըստ պահանջման ժամանակաց եւ պիտոյից ազգիս, եւ այլ եւ այլ տեւողութեամբ կենաց, ոմանք՝ երկար, եւ ոմանք՝ կարճ եւ սակաւ օրեայ, կատարեր են իրենց պարբերական ընթացքը. 'նման այն յանկարծ-երեւեաց եւ լուսավառ փայլատականց՝ որոց փայլին եւ մեծին մի կ'ըլլայ. անոնց յաջորդքեր են այլք՝ աւելի կատարելագոյնք, որք յետ մի անգամ սկսեւ լու՝ դեռ շարունակ կը յարատեւեն: Մոյն գեղեցիկ եւ օգտաւէտ նպատակաւ ահա սկսաւ եւս 'ի լոյս ընծայիլ մեր Քաղմավէշն, որ թէ 'հրչափ կրցաւ իւր նպատակին հասնիլ կամ թէ ոչ, հարկ չէ՛ բուել, անշուշտ կը խորհրդածեն զայն ընթերցողք: Սակայն ներուի մեզ այսչափ միայն խոստովանիլ, զի միշտ եւ անդուժ ջանացուեր է՝ ոչ միայն չխոտորիլ յայն հոգեւոյն եւ նպատակէն, այլ ըստ կարելոյն եւ եւս մօտենալ առ այն, եւ աւելի օգուտ եւ ձեռն-տուութիւն ընել մեր ազգին. 'նմին իրի հարկ համարեցանք եւս՝ յայլ եւ այլ հանգամանս եւ 'ի շրջանս ամաց՝ այլ եւ այլ անուամբք յորջորջել, այլ եւ այլ փոփոխութիւններ ընելով՝ ըստ պահանջման ժամանակին:

Քաղմավէշն՝ որ հնազոյն եւ երիցագոյն է արդ քան զայլ ամէն ուսում:

Նաեւերեւ ազգիս, կը յուսամք որ այս փառքն անկապուտ պիտի պահէ եւ պիտի ըլլայ իւր յատուկ բնադրոշմն. — անցեալն ստոյգ է, ոչ որ կը ժխտէ կամ կ'երկմտի. սակայն ոչ ինչ նուազ ստոյգ է եւ ապառնին 'ի միտս եւ 'ի ջաւնս մեր: — Վասն զի քանի որ ազգ եւ հայրենիք կեդանի են, քանի որ ճշմարիտ կրօնասիրութիւն եւ ճշմարիտ ազգասիրութիւն լծակցեալք 'ի մի, ինչպէս մեր սիրտը 'նոյնպէս եւս վառեն ամէն մի հայ անհատի սրտերը, բնաւ կարելի չէ թէ աղօտանայ Քաղմավէպն իւր միջօրեայ պայծառութենէն եւ խոնարհի 'ի մուտս անյուսութեան: Եւ առ այս կը յուսամք' թէ այնքան ազգասիրաց միջէն գտնուին ոմանք, (երանի' թէ բնաւ իսկ), որը ձեռնտու լինին եւ օգնաւ կանք մեր այս փափագանաց ճշդիւ կատարման, յորդորելով զմեզ 'ի սոյն իրենց անդուռ ուսումնասիրութեամբն եւ ընթերցասիրութեամբ. որով եւ մեք եւս պիտի քանամք' որքան կարելի է' դիւրացնել միջոցները, եւ երազել Քաղմավիպին թերթից հրատարակութեան ժամանակը' դոյզն ինչ փոփոխութիւն ընելով 'ի դիւրութիւն ընթերցողաց. առ որ թէպէտ շատ ժամանակէ 'ի վեր յօժար էինք, սակայն գործադրութիւնը յարմարագոյն պատես. հի մը թողուեր էր:

Արդ այս շնորհաւոր ամանորով կը սկսինք ահա 'ի գործ դնել սոյն փոքրիկ փոփոխութիւնս այսու օրինակաւ. — Եռամսեայ Պրակն' փոխանակ ամէն երեք ամիս մէկ մը ամբողջ հրատարակուելու, ասկէ վերջ մաս մաս բաժնելով' ամսօրեայ պիտի ըլլայ. եւ իւրաքանչիւր ամսոց առաջին օրերը երկեր կու թերթը 'ի լոյս պիտի ընծային եւ ղրկուին առ Գործակալս եւ Քաժանորդ դըս Քաղմավիպին. ուստի եւ երեք ամսոց մէջ վեց թերթք կազմուելով' պիտի ձեւանայ Եռամսեայ Պրակ մի. — այսու աւելի սերտ եւ գրեթէ անընդհատ յարաբերութեան մէջ պիտի մտնեն Գործակալք եւ Քաժանորդք ընդ Խմբագրութեանս. Եւ յիշատի, ինչպէս կանխեցինք ըսել, չ'կրնար մեզ ուրիշ աւելի մեծագոյն սփոփանք կամ քաջալեր լինել, բայց միայն մեր ազգայնոց ազնիւ սրտից գոհութիւնն' եւ Քաղմավիպին ընդունելութիւն գտնեն առ նոսա. որոյ կատարման վրայ վստահ եւ աներկմիտ լինելով, յիշելով անցեալն եւ յուսալով ապառնուոյն վրայ, կը կանխեմք մատուցանել համօրէն ազգիս մեր շնորհակալիքը, եւ կը մաղթեմք ամենուն առ հասարակ յաջողութիւն եւ երջանկութիւն. — Շնորհաւոր Ամանոր:

